ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԴԱԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Փետրվարի 16-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բադալ Մուրադյանը Կառավարական տանը ընդունում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այցելությունը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի միջև տեղի է ունենում ջերմ զրույց, սրտագին մթնոլորտում:

Զրույցին ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը: